

Հ. ՄԱՂԱՔՅԱՆ

ԱՐՈՏՆԵՐԻ ՅԵՎ, ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ  
Խ Ն Ա Մ Ք Ը

631  
Մ-21

21 JUN 2013

04 AUG 2010

631  
5-20

Հ. ՄԱՂԱՔՅԱՆ

ԱՐՈՏՆԵՐԻ ՅԵՎ, ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ  
**Խ Ն Ա Մ Ք Ը**

3771 1008  
56058 35093

55



1984

ՅԵՐԵՎԱՆ

### ԱՐՈՏՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Սոցիալիստական անասնապահութեան վերակառուցումը սերտորեն կապված է կերի պրոբլեմի անհապաղ լուծման հետ: Առանց կայուն կերի բաղայի, բարձր ապրանքային անասնապահությունն անիմաստ է:

Մեր անասնապահութեան սոցիալիստական բնույթը պահանջում է կերահայթայթման միջոցների ու մեթոդների վճռական վերակառուցում: Պայքարը բերքի համար, պայքարը ցանքաշրջանառութեան համար, պայքարը մարդագետիկների ու խոտհարքների յուրաքանչյուր խտրը լրիվ ու լավ ոգտագործելու համար, հանդիսանալու յի անասնապահութեան փառավոր հաղթանակի գրավական:

«Բուրձիկները պիտի տիրապետեն տեխնիկային» — ահա ժողովրդական անտեսութեան սոցիալիստական վերակառուցման եզրխայի կարևորագույն լուրենգը:

Այս բրոշյուրի հիմնական նպատակն է մեր կոլտնտեսական և խորհանտեսական մասսային ոգնել՝ տիրապետելու խոտհարքների և արոտների խնամքի տեխնիկային, ոգնել կերի բնական տարածութեան խնամքի գործը դնելու պատշաճ բարձրութեան վրա և դրանով իսկ բարձրացնելու աշխատանքի վորակն ու մեծացնելու մեր անասնապահական տնտեսությունների ապրանքայնությունը:

Սորհրդային Հայաստանը, ինչպես և Անդրկովկասի մյուս հանրապետություններն աչքի յեն ընկնում բնական կերի բնագարձակ տարածություններով, ըստ վորում իրենց տարածութեան ընդարձակութեամբ գերակշռում են ամառային արոտները:

Չնայած բնական կերերի — արոտների ու խոտհարքների — լայնածավալ տերիտորիաների առկայութեան, մեր անասնապահական խորհանտեսություններն ու կոլտնտեսություններն առայժմ կերերի մեծ կարիք են զգում:

Կերերի այդ կարիքն առանձնապես սուր կերպով զգացվում է ձմեռը՝ մսուրային պահվածքի շրջանում, յերբ տնտեսութեան մեջ խոտի պակասութեան հետևանքով ուժեղ չափով ընկնում է

Պատ. խմբագր.՝ Մ. Իսահակյան  
Թարգմ.՝ Վ. Բարսեղյան  
Մտնորդիչ՝ Լ. Այվազյան և Մ. Փանկալան  
Հանձնվել է տպագրութեան 1934 թ. մարտի 3-ին.  
Մատրատրվել է տպագրելու 1934 թ. մարտի 12-ին.  
Չլավելիա № 176 Տիրաժ 2000 Պատվեր № 100  
Մեկ տպագր. Թիքթում 76,800 ապ. նր.

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԱՐԱՏԻ ՅՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԳՅԱՆ 50

տաժարի արդյունավետութունը, վատանում և նրա առողջութունը և հաճախ պատճառ դառնում տաժարի մեծ թվով սասկումներ: Մեր տնտեսութուններում խոտի պահասը բացառըվում է վնչ միայն խոտհարքների տարածութունների պակասությամբ, այլ բնական խոտհարքներից համեմատաբար վատորակ խոտ ստացվելու հետ, նաև քիչ բերքատվությամբ:

Մեր տնտեսութուններում արոտային կերի քանակն ամենուրեք նույնպես վերին աստիճանի սահմանափակ է: Թեև մեր տնտեսութուններն ոգտագործում են հսկայական տարածություններով արոտներ, վորպես ամարային բնական արոտներ և այլն, այնուամենայնիվ կարելի չէ ասել, վոր շատ տնտեսություններ, թեև շատ արոտներ ունեն, սակայն արոտային կերը քիչ է: Այսպիսով Խ. Հայաստանի խոտհարքների և արոտների այժմյան վիճակը չի կարելի բավարար համարել: Նրանց այդպիսի դրության պլանավոր պատճառներն են.— մարգագետինների անսխտեմ ու անկանոն ոգտագործումը և մարգագետինների խնամքի ու բարելավման միջոցների սխտեմատիկ կիրառման բացակայությունը: Սակայն Խ. Հայաստանի բնական խոտհարքներն ու արոտներն իրենց բնութիով լավորակ են և խնամքի ու բարելավման անհրաժեշտ միջոցների կիրառումից հետո, նրանք կարող են շատ ուժեղ կերպով բարձրացնել իրենց արդյունավետութունը և խոտի վորակը:

Բնական յուրաքանչյուր խոտհարք կամ արոտատեղ ժամանակի ընթացքում սկսում է աստիճանաբար վատանար: Մարգագետնի բոլոր խոտերն իրենց սնունդի անհրաժեշտ մասն արմատների միջոցով ստանում են հողից: Տնտեսական ոգտագործման միջոցով մենք ամեն տարի մարգագետիններից հավաքում ենք խոտը կամ վեր ենք ածում արոտավայրի:

Այսպիսով, մենք ամեն տարի արոտների հողում պակսեցնում ենք սննդարար նյութերի քանակը,— այլ կերպ ասած՝ հողը հյուժում ենք: Ի հարկե, մարգագետնի հողի հյուժումը կանխել կարելի չէ համապատասխան պարարտացումով, սակայն բոլորին էլ հայտնի չէ, վոր տնտեսություններում այդ միջոցառումը բոլորովին չի կիրառվում, վորովհետև մեզ մոտ մարգագետինների վրա նայում են վորպես մի հողատեսքի, վորը հնարավորություն է տալիս նրանից այս կամ այն ձևով կեր ստանար, իսկ ինքը վոչնչի կարեք չի դրում: Այսպիսով, մարգագետինների վատա-

նայու, վիչանայու պատճառներից մեկը— նրա հողի աստիճանական հյուժումն է:

Կերի տեսակետից մարգագետնային արժեքավոր խոտերը կարող են լավ զարգանալ միայն բավականաչափ փխրուն հողերում, վորոնց մեջ բույսերի արմատները, ինչպես նաև շուրն ու ողը, հեշտությամբ են թափանցում: Սակայն ժամանակի ընթացքում մարգագետինների խոտերը փարթամ զարգանալով, հողում ստեղծում են արմատների և վերարմատների խիտ ցանց, վորոնք տարիների ընթացքում ավելի ու ավելի յեն խոտանում և, վերջապես, կազմում են մարգագետիններին յուրահատուկ հիմի համատարած շերտ: Նրա հետևանքով մարգագետնի հողն ուժեղ կերպով պնդանում է, հիմը պահում է ավելորդ խոնավությունն ու խանդարում է հողի մեջ բավականաչափ ու թափանցելուն: Մարգագետնի հողում արժեքավոր կերաբույսերի կյանքի համար կազմված են ֆլասակար նյութեր (որդանական թթուներ), և դրա համար էլ նրանք սկսում են դուրս մղվել մարգագետնի խոտերի շարքից, փոխարինվելով ավելի քիչ պահանջկոտ և տնտեսական տեսակետից ավելի քիչ արժեքավոր բույսերով: Այսպիսով, մարգագետինների վատ աճելու մյուս պատճառը— մարգագետնի հողի հողի պնդանալն է և վորպես դրա հետևանք՝ հողի աստիճանաբար ճահճացում, թթվում և ողի ռեժիմի վատացում:

Մարգագետինների վատացման այս բնական պրոցեսն ավելի չէ արագացվում մարդու կողմից մարգագետինները վատ ու անշնորհք ոգտագործելու հետևանքով: Մարգագետիններին մեծապես ֆլասում է տաժարի անժամանակ արածեցումը: Մարգագետիններում վաղ գարնանը և ուշ աշնանը տաժար արածեցնելն ավելի չէ պնդացնում հողը, նպաստում է նրա մեջ ողի պակասելուն, նրա մակերևույթի վրա ջրի կանգնելուն, հողակուլյաների կոճղների և մամուռի կաղմվելուն: Նրա հետևանքով խիտ փոխվում է մարգագետնային խոտակաղմն ու դրա հետ միասին վորակապես վատանում ու քանակապես պակասում է մարգագետինների վերերկրյա բուսականությունը:

Մեր խոտհարքներին մեծ ֆլաս է պատճառում ուշ խոտհունձը, այսինքն՝ ուշացած խոտահավաքը: Ուշացած հնձի գեպքում կերի տեսակետից անարժեք, թունավոր խոտերն ու մոլխոտերն արդեն հասունացած են լինում, նրանք սերմակալում են և տարեց-տարի մարգագետիններում, ի հաշիվ արժեքավոր

կերբի, բազմանում են մտախոտերը և անցանկալի ու վնասակար խոտերը:

Արոտավայրերը տավարով շատ ծանրաբեռնելը և վոչ կանոնավոր ոգտագործելն ուժեղ թափով արագացնում և նրանց վատացումը:

Այսպիսով, անուցիտնալ ոգտագործման հետեանքով, մեր ամառային արոտների ու խոտհարքների այժմյան դրությունը չի համապատասխանում նրանց բնական հատկություններին, դրա համար ել մեր մարդագետինները քիչ արգյունավիտ են, իսկ շատ շրջաններում՝ բոլորովին անպետք:

Ռացիոնալ կերպով կազմակերպված սոցիալիստական տընտեսությունները — խորհրատեսություններն ու կոլտնտեսությունները, — ի հարկե մարդագետինների այդպիսի դրության հետ հաշտվել չեն կարող և դրա համար ել խիստ այտասերված մեր բնական մարդագետինների ահագին տարածությունները բարելավում են համապատասխան միջոցների կիրառումով:

Այդ պատճառով բնական մարդագետինները պահանջում են պատշաճ և համապատասխան մշտական խնամք: Յեթե մարդագետինների խնամքի համար բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները ճիշտ կիրառվում են, — ասլա արոտներն ու խոտհարքները յերկար ժամանակ պահպանում են իրենց արտադրողականությունը և կերի տեսակետից խոտի վորակը: Հսկասակ դեպքում, ինչպես վերը տեսանք, բնականորեն բարելավվող մարդագետիններն արագորեն այրասերվում են ու վիշնում: Մարդագետինների վորակական ու քանակական արտադրողականությունն առանձնապես բնկնում է, նրանց անկանոն սղտագործելու հետեվանքով (տավարով չափազանց ծանրաբեռնել, անկանոն արածեցում, խոտի ուշ հունձ և այլն): Ուստի մարդագետինների արգյունավիտությունը բարձրացնելու համար, անհրաժեշտ է նրանց կանոնավոր ոգտագործել և խնամքի անհրաժեշտ միջոցներ կիրառել:

Ինչպես խոտհարքների, նույնպես և արոտային մարդագետինների, կանոնավոր ոգտագործման յեղանակները քննության են առնված ուրիշ զբքույկներում: Այս զբքույկում սրվում են մարդագետինների սոցիոնալ խնամքի անհրաժեշտ միջոցները:

Սոտհարքների և արոտային մարդագետինների խնամքի հիմնական միջոցները հետևյալներն են — 1. Թմբերի, կոճղների վոչնչացում, 2. մտախոտերի և թունավոր բուսականության

վոչնչացում, 3. քարերի հալաքում, 4. մարդագետինի փոցխում, 5. ցաքանելը, 6. պարարտացում, 7. կենդանիների կրկողանքի հավասարեցում, 8. խոտեր ցանել:

Մի քանի մարդագետինների նկատմամբ անհրաժեշտ է հոդ տանել նաև մարդագետնային հոդի անհրաժեշտ խոնավության կանոնավորման մասին:

### ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐՈՒՄ ԹՄԲԵՐԻ, ԿՈՃԼԵՐԻ ՎՈՉՆՉԱՑՆԵԼԸ

Շատ հաճախ մեր բնական մարդագետիններում նկատվում է ուժեղ թմբակալում, վորք շատ տեղերում հետեանք է նրանց անկանոն ոգտագործման: Վաղ պարնան և ուշ աշնանը, յերբ մարդագետինների հոդը խոնավ է ու կահուղ, արածող տավարը սրողում է բազմաթիվ արահեկաներ, վորոնք տարեց-տարի ավելի ու ավելի խորանում են: Տավարի արորած այդպիսի ճանապարհներում կազմվում են թմբեր: Այդ ըստ յերկարության և սովորաբար ավելի կամ պակաս չափով հարթ մակերեսով, դուրս բնկած թմբերը շատ բնորոշ են մեր անժամանակ արածեցված մարդագետիններում:

Համեմատաբար չոր մարդագետիններում շատ հաճախ պատահում են վոչ բարձր թմբեր, վորոնք կազմված են մըջնաբեռների կամ մկնաբեռների վրա: Այդ թմբերը հողոտ են և համեմատաբար փափուկ: Շատ հաճախ մեր մարդագետիններում պատահում են խտաթուփ կանաչներից և բոշխից կազմված թմբեր:

Այդպիսի թմբերը շատ խիտ են լինում և հաճախ շատ մեծ: Չհավաքված խոտերը նույնպես կարող են մամուռով ծածկվել և թմբեր կազմել:

Վերը թված բոլոր տեսակի թմբերը մարդագետիններին մեծ վնաս են տալիս: Իրանք մակերևութային շրբեր լճանալու համար բարեհաջող պայմաններ են ստեղծում, հետեապես և մարդագետինների ճանճացման ու խոտի վորակի վատացման պատճառ հանդիսանում: Բացի դրանից, նրանք մեծ չափերով կրճատում են մարդագետինների ոգտակար տարածությունը և խոչնդոտ հանդիսանում մարդագետինների աշխատանքների մեքենայացմանը, վորով և ուշացնում ու թանդացնում են խոտհարքի աշխատանքները: Ուստի մեր մարդագետիններում հողաթմբերի վոչնչացումը, թեև պատկանում է մեր մարդագետինների բարեկամության ու խնամքին վերաբերող պարզ աշխատանքների շարքին, բայց և այնպես անհրաժեշտ ու անհետաձգելի աշխատանք է:

Մարզագետիններում թմբերը վոչնչացվում են ձեռքով կամ հատուկ թմբակորիչ մեքենաներով: Կան մի քանի սիստեմների թմբակորիչներ. սակայն դրանք բոլորն էլ վատ են աշխատում: Մեծ թմբերը նրանք վատ են կտրում, փոքրերը թողնում են կամ վերեկից կտրում միայն: Դրա համար թմբերի ձեռքով (տրորելով, բահով, թորելով, բրիչով) վոչնչացնելը շատ ավելի արդյունավետ է: Վոչ մամուկալած քարերի և այլ բուսականութայն հետևանքով կազմված թմբերն անպայման ձեռքով պիտի վոչնչացնել: Բուսական ծաղուկն ունեցող մրջնաբները, մկնաբները և վատ արածեցման հետևանքով թմբերը հեշտութայն վոչնչացվում են ֆրեզերներով կամ Ռանդելի ծանր սկավառակավոր փոցխերով:

Քանդած թմբերը մանրացվում են և ոգտագործվում մարզագետիններում գոյություն ունեցող անհարթությունները (փոսեր, խանդակներ և այլն) լցնելու համար: Քանդած բուսածրերն ոգտագործում են պարարտացնելու համար: Այդ բուսածրերը հետո չորացնում են, այրում և մոխիրը նույնպես ոգտագործում մարզագետինները պարարտացնելու համար:

Մեկ հեկտարի թմբերը վոչնչացնելու համար, նայած նրանց քանակին ու բնույթին,—պահանջվում է 3—6 բանվորական օր:

### ՄՈՒԼԻՈՏԵՐԻ ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՉՆՉԱՑՆԵԼԸ

Մարզագետինների կարևոր խնամքը—մոլախոտերի և թուխավոր բուսականութայն դեմ սիստեմատիկորեն պայքարելն է: Մարզագետիններում մոլախոտերը խոչնդոտ են հանդիսանում կերի տեսակետից արժեքավոր մարզագետնային խոտերի զարգացմանը, փչացնում են ստացված խոտի վորակը՝ դարձնելով նրան կոպիտ ու նվազ սննդավոր, կամ տավարի համար վտանգավոր են մոլախոտերի շատ տեսակները, վորոնք առաջացնում են փորլույծ, արյունամեղում և հաճախ նույնիսկ նրանց ստակելու պատճառ հանդիսանում: Մոլախոտերի մի քանի տեսակները փչացնում են կաթնամթերքների վորակը, նրանց հաղորդելով անդուրեկան համ կամ հոտ:

Մարզագետիններում յերևացող մոլախոտերն արագորեն աճում են, տարածվում և խեղդում են արժեքավոր կերախոտերը: Մարզագետիններում խոշոր չափերով դարգանում են փնջաբույսերը, վորոնք անցնելով հողի մեջ, մեքենայորեն փլասում են կենդանիներ-

րի աղետամոքսային տրակտը, իսկ արտոններում՝ տավարը նրանց բոլորովին չի ուտում: Դրանք տարեց-տարի աճելով ու տարածվելով, արտոններում ահագին տարածություններ են դրավում ու գցում են արտոնի վորակը: Այլազան խոտերի կոպիտ ներկայացուցիչներն արժեքավոր կերախոտերից տարածություններ խլելով, իրենք տալիս են կոպիտ, կոշտ և նվազ սննդավոր խոտ:

Բոլոր ասածներից հետևում է, վոր մոլախոտերի վոչնչացումը նույնպես հանդիսանում է բնական մարզագետինները բարելավելու պարզ միջոցառումներից մեկը: Մոլախոտերի դեմ սիստեմատիկորեն պայքարելը հանդիսանում է մարզագետինների խնամքի անհրաժեշտ միջոց: Շատ շրջաններում, խիստ մոլախոտաված մարզագետիններում այդ միջոցը մարզագետինների արտադրողականությունը կարող է բարձրացնել մինչև 30—50%:

Մարզագետիններում մոլախոտերը բազմանում են սերմերով կամ թե ընձյուղներով: Քանի վոր մոլախոտերի բազմացող օրգաններն արտաքին անբարենպաստ պայմանների նկատմամբ շատ դիմացկուն են, ուստի նրանց դեմ պայքարը պիտի լինի մշտական—մարզագետիններից ոգտվելու և նրանց վեզետացիայի ամբողջ ժամանակաշրջանում: Սերմերով բազմացող մոլախոտերի դեմ անմիջական պայքարը եֆեկտավոր կլինի այն դեպքում միայն, յեթե այն տարվի ամբողջ շրջանում, մարզագետնային ամբողջ տարածութայն վրա: Մարզագետնի առանձին մասերում մոլախոտերի վոչնչացումն առանձին, աչքի ընկնող ոգուտ չի տա, վորովհետև քամիները, ջուրը և անասունները շրջակայքից կարող են բերել այդ սերմերը և նորից ցանել արդեն իսկ մաքրած մասերում:

Սերմերով բազմացող մոլախոտերի դեմ պայքարելու գլխավոր միջոցը՝ հնձելն է մինչև նրանց սերմերի նորմալ հատունանալը: Թեթե այդպես մոլախոտաված մարզագետիններում մի քանի տարի շարունակ մոլախոտերը հնձվում են շատ, ապա կարելի յե բոլորովին ազատվել այդ մարզագետինների համար միանգամայն անցանկալի մոլախոտերից:

Առանձնապես դժվար է պայքարել մարզագետինների այն մոլախոտերի դեմ, վորոնք բազմանում են վոչ թե սերմերով, այլ ընձյուղներով (կոճղարմատներով, պալարներով, սոխարմատներով): Այս մոլախոտերի մեջ հաճախ պատահում են խիստ թուխավոր խոտեր, վորոնք շատ հաճախ անասունների օտակումների պատճառ են հանդիսանում: Պայքարն այդ մոլախոտերի դեմ,

նրանց մասսայական զարգացման դեպքում՝ հաճախակի շատ ցածրից հնձելն է, վորը թուլացնում է նրանց վերանորոգվելը: Մարզագետիններում նրանց քիչ չափերով տարածված լինելու դեպքում, նրանց դեմ անմիջականորեն պիտի պայքարել բահերով՝ փորելով կամ արմատահան անելով:

Պիտի հիշել, վոր մոլախոտերը պիտի վոչնչացնել մինչև նրանց սերմակալելը: Արմատախիլ արած և հնձած բոլոր մոլախոտերը պիտի հավաքել ու մարզագետիններից դուրս տանել: Այն բոլոր վայրերում, վորտեղ մարզագետիններում շատ ուժեղ տարածված է սակավարժեք բուսականութուն, անհրաժեշտ է մտածել խոտասերմեր ցանելու միջոցով արհեստական նոր մարզագետին ստեղծելու մասին:

Ամբողջ շրջանի սահմաններում կամ մարզագետնային խոշոր մասսիվում մոլախոտերի դեմ միայն կոլեկտիվ պայքարն իր նպատակին կհասնի և այդ տեսակետից սոցիալիստական սեկտորի մեր խոշոր տնտեսութունները բոլոր հնարավորութուններն ունեն պլանային աշխատանքների միջոցով վոչնչացնելու մարզագետինների սակավարժեք ու փլասակար բուսականութունը:

**ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԸ ՔԱՐԵՐԻՑ ՄԱՔՐԵԼԸ**

Մեր բնական արոտների մեծագույն մասը խիստ քարքարոտ է: Խ. Հայաստանի մի քանի շրջանների մարզագետինների ընդհանուր տարածության 80 և ավելի տոկոսը կազմում են քարերը: Մարզագետիններից քարերը հավաքելն ու հեռացնելը— մարզագետինների բարելավման ու խնամքի անհրաժեշտ, պարզ ձեռնարկումներից մեկն է: Բացի նրանից, վոր քարերը կրճատում են մարզագետինների ոգտակար տարածութունը, միևնույն ժամանակ հանդիսանում են վորպես մոլախոտերի տարածման ոջախներ և մամուռով ծածկվելով՝ մարզագետիններում թմբեր են առաջացնում:

Քարերի հավաքելն առանձնապես կարևոր նշանակութուն ունի մարզագետինները վորպես խոտհարք ոգտագործելու դեպքում, վորովհետև մեծ քանակությամբ քարերը լուրջ խոչնդոտ են հանդիսանում խոտհարքի աշխատանքները մեքենայացման լինթարկելու համար:

Քարերը կարելի է հավաքել տարվա բոլոր յեղանակներին:

Քիչ քանակության քարերը ձեռքով են հավաքում: Մեկ հեկտ. քարերը հավաքելու համար կպահանջվի 1—3 որ:

Մեծ քարերը, վորոնց տեղափոխելը դժվար է, կարելի է հեռացնել յերկու ձևով.— 1. պայթեցնելով մանրացնել ու սպաստանել, 2. թաղելով նույն տեղում, — մարզագետնում: Այդ դեպքում այդ մեծ քարերի կողքին խոր փոս են փորում, նրանց գլորում—գցում են փոսի մեջ և հողով ծածկում:

Քարեր հավաքելու բոլոր դեպքերում պիտի լավ հիշել, վոր լեռների լանջերից (մանավանդ ուղորդ, դիք) կարելի է հավաքել միայն հողի յերեսի քարերը: Իսկ այն քարերը, մանավանդ խոշորները, վորոնք մեծ մասով արդեն թաղված են հողի մեջ և վորոնց հավաքելու համար լանջերում պահանջվում է հողը փորել, — վոչ մի դեպքում չպիտի հավաքել: Սա բացատրվում է նրանով, վոր լեռների լանջերում, քարերի հանած տեղերը հողը լանջերից հոսող ջրերի հետևանքով ուժեղ կերպով լվացվում է, և տարիների ընթացքում մարզագետնային այդպիսի լանջերը կարող են զրկվել թե հողից և թե բուսականութունից:

Մարզագետիններից հավաքած քարերը, յեթե մոտակայքում կան բնական մեծ չնգրներ, կարող են փոխադրվել այստեղ, կամ թե չե նրանց կարելի է հավաքել մարզագետնի ավելի քարքարոտ տեղերը և ամուր կույտեր կազմել: Մարզագետիններից հավաքած քարերը կարելի է գործադրել նաև անասունների համար թեք ու վտանգավոր լանջերը ցանկապատելու համար, այլև լանջերի վրա առաջացած փոսերն ու ձորակները լցնել:

**ՄԱՐԳԱԳԵՏՆԻ ՓՈՑԻԵԼԸ**

Մարզագետնի խնամքի անհրաժեշտ միջոցներից մեկը—յուրաքանչյուր տարի փոցխելն է: Փոցխելու նպատակն է հեշտացնել ողի և ջրի հողի մեջ թափանցելը, արագացնել բուսահողի քայքայումը, մարզագետնից հեռացնել խոտերի մնած ցողուններն ու տերևները, վորոնք դժվարացնում են բույսերի նոր ընձյուղները վերանորոգումն ու զարգացումը: Պիտի փոցխել յուրաքանչյուր հնձից և անասունների արածեցումը վերջանալուց հետո: Կարելի է փոցխել նաև յուրաքանչյուր գարնանը: Փոցխում են կամ մարզագետնային հատուկ փոցխերով, կամ զիգ-լուս փոցխերով, և կամ սովորական յերկաթյա փոցխերով՝ վրան քարեր դնելով: Դաշտային, սովորական փոցխերը մարզագետին-

ներում վատ են աշխատում, ուստի պիտի աշխատել մեր խորհրտնախորհրդաններում ու կոլտնտեսութուններում մարդագետնա-  
 յին փոցխեր դորձողը (Լաակե, Աուրասա, Ռազակի և այլն):  
 Լաակե տիպի մարդագետնային փոցխի կառուցվածքի առանձնա-  
 հատկութունն այն է, վոր ամբողջ փոցխը կազմված է շարժա-  
 կան առանձին ողակներեց, այնպես վոր յուրաքանչյուր ողակը,  
 նայած մարդագետնի մակերևույթին, կարող է բարձրանալ և իջ-  
 ներ: Իջնելիս ողակն իր կարճ, բութ ատամներով խփում է ձիմե-  
 ըին և կտրող ազդեցութուն անում:

Պոկվում են թույլ արմատակալած մամուռներն ու խոտերը:  
 Ընդհանրապես խոտերը կտրվելուց վախենալու կարիք չկա: Փոց-  
 խելուց հետո նրանց անուսն ու ժեղանում է: Պոկված մամուռներն  
 ու խոտերը պիտի կույտեր անել, մարդագետնից դուրս տանել,  
 չորացնելուց հետո այրել, իսկ մոխիրը ցրել մարդագետնի վրա:  
 Մարդագետնները բարելավելու նպատակով պիտի փոցխել  
 2—4 հետքով:

Ճիմի հաստ շերտ և խոտերի մեջ գերակշռող խտաթուփ  
 բույսեր կամ բոշխ ունեցող հին մարդագետնների փոցխումը  
 խտախաղմի նկատելի բարելավում չի առաջացնում: Այդպիսի  
 մարդագետններում, փոցխումը, վորպես խնամքի միջոց կիրա-  
 ուելը—անօգուտ է, փոցխումը լավ հետևանք է տալիս այն մար-  
 դագետններում, վորոնց խոտերի մեջ գերակշռում են ցանցա-  
 թուփ բույսերը կամ այլբույսերը:

**ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ ՏԱՓԱՆԵԼԸ**

Մթնոլորտային տեղումներով վոչ այնքան առատ վայրերի  
 մարդագետնների տափանելը հանդիսանում է մարդագետնի  
 խնամքի անհրաժեշտ միջոցներից մեկը:

Բացի դրանից, այս միջոցը լավ է ազդում թույլ ձիմով  
 ծածկված և փուխը հողերի վրա: Տափանելը նպաստում է հողի վե-  
 ըին շերտի խոնավութան բարձրացմանը, խտացնում է հողը, վորն  
 այնքան կարևոր է փափուկ հողերում անասունների արածելու  
 դեպքում: Տափանելը բույսերին պաշտպանում է սառչելուց և  
 արմատների կարտվելուց, վոր տեղի յե ունենում փոփոխակի  
 ցուրտ ու տաքից:

Պիտի տափանել վաղ դարնանը—ծանր տափանով, մինչև

բույսերի աճելը: Տափանները կարող են լինել տարբեր կառույ-  
 վածքի, սակայն հիմնականում նրանք պիտի կառուցված լինեն  
 այնպես, վոր ըստ ցանկութան կարելի լինի փոխել նրանց ծան-  
 րությունը:

**ՄԱՐԳԱԳԵՏՆԻ ՊԱՐԱՐՏԱՅՆԵԼԸ**

Մարդագետնի խնամքի հիմնական ձեռնարկումներից մեկը—  
 նրա պարարտացման կանոնավոր կազմակերպումն է: Պարարտա-  
 ցումը հանդիսանում է արտաների ու խոտհարքների արդյունա-  
 վետությունը, ինչպես նաև ըստ հնարավորին նրանց յերկար ժա-  
 մանակ լավ վիճակում պահպանելու զլխավոր միջոցը:

Բացի այսպես կոչված հիմնական պարարտացումից, վորը  
 մտցվում է մարդագետնների բարելավման դեպքում, մարդագետնի-  
 ները կարիք են դրում ամեն տարի պարարտացնելու, փոխհատու-  
 ցելու անդանյութերի քանակը, վորպիսիք, կանաչ կերի միջո-  
 ցով վերցվում է մարդագետններից: Մարդագետնները կարելի  
 յե պարարտացնել ինչպես հանքային, նույնպես և որդանական  
 պարարտանյութերով: Մարդագետնները պարարտացնելիս լայ-  
 նորեն կիրառվում են ազոտով հարուստ պարարտանյութեր: Դա  
 բացատրվում է նրանով, վոր մարդագետնների խոտերը դեպի  
 ազոտական պարարտացումներն ավելի զգայուն են ու պահանջ-  
 կատ: Մարդագետններում ազոտը մեծացնում է լորագգի և ար-  
 ժեքավոր բուսականութան տոկոսային բովանդակությունը և  
 նպաստում է սպիտակուցային նյութերի կուտակմանը, վորի  
 շնորհիվ լավ արտում արածող տավարը կարիք չի դրում լրա-  
 ցուցիչ ուժեղ (սպիտակուցային) կերի: Բացի դրանից, ազոտա-  
 կան պարարտացումը բարձրացնում է մարդագետնի արդյունա-  
 վետությունը և խոտը հնձելուց հետո խթանում է նրա ամսանը:

Ս. Հայաստանի պայմաններում ազոտական պարարտացում-  
 ներից ամենից շատ մեծ նշանակութուն ունի կայցիում-ցիանա-  
 միդը, վորը գործարանային միջոցով պատրաստվում է Ղարաքի-  
 լիսայում: Ցիանամիդն իր մեջ պարունակում է մինչև 20% ազոտ  
 և շատ լավ ազդում է կավային հողերի վրա: Այն չի կարելի գոր-  
 ծազրել խոնավ ու ճահճոտ թթու հողերում, վորովհետև այդ պայ-  
 մաններում կարող են բույսերի վրա վատ ազդող թունավոր  
 միացումներ առաջանալ:

Ցիանամիդով պիտի պարարտացնել բույսերի վեգետացիան

սկսվելուց 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 շաբաթ առաջ, վորովհետև արդեն բուսած, վե-  
գետացիան սկսած բուսականությունը նրանով պարարտացնելիս,  
ուժեղ կերպով այրվում են բույսերի տերևները: Յիսնամիդը  
մացնելիս անմիջապես փոցխով 8—10 սանտ. խորությամբ հողի  
տակը են անում: Մի հեկտարին մտցնում են 0,8—1 ցենտ.: Մարգա-  
գետինները բարելավելու համար հեկտարին կարելի յե մտցնել  
1<sup>1</sup>/<sub>4</sub>—2 ցենտ.:

Մարգագետնի համար լավ պարարտանյութ ե համարվում  
վառարանի մոխիրը, վորը միջին հաշվով պարունակում ե մինչև  
10<sup>0</sup>/<sub>0</sub> կալի և վորոշ քանակությամբ ֆոսֆոր ու կալցիում: Մար-  
գագետիններում մոխիրը նպաստում ե մամուռի վոչնչացմանը և,  
զագետիններում մոխիրը խոտերի, թուլացնում ե թթու խոտե-  
րի հաշիվ արժեքավոր կերախոտերի, թուլացնում ե թթու խոտե-  
րի (բոշխ) աճումը: Հետևապես, մոխիրը, բացի բերքը մեծացնե-  
լուց, բարձրացնում ե նաև ստացվող խոտի վորակը: Մոխիրը  
պիտի մտցնել գարնանը կամ աշնանը՝ հեկտ. 5—7 ցենտ.: Մար-  
գագետինները բարելավելու դեպքում հեկտ. կարելի յե մտցնել  
մինչև 10 ցենտ.: Մոխիրը մարգագետնի վրա շող են տալիս հա-  
վասար շերտով և հետո յերկու ձեռքով փոցխում են: Մոխիրը  
վորպես պարարտացում ներգործում ե դանդաղ և խոտերի վրա  
նրա ազդեցությունը տևում ե 2—3 տարի: Բաց ողում, անձրևի,  
չորեանի տակ պահելու դեպքում, մոխիրը կորցնում ե իր մեջ պա-  
րունակող շատ սննդանյութեր, ըստ վորում կորցնում ե նաև իր  
տնտեսական արժեքը: Դրա համար ել խորհանտեսություններում  
և կոլտնտեսություններում անհրաժեշտ ե այն խնամքով պահել:

Մոխիրը պիտի պահել անձրևից, ձյունից ապահով չոր տե-  
ղում: Մոխիրը պահելու համար անհրաժեշտ ե ծածկ շինել:  
Որգանական պարարտացումներից մարգագետնային լավ  
պարարտանյութ են համարվում գոմաղըն ու գոմաղբահյութը:  
Գոմաղբը հանդիսանում ե լրիվ պարարտանյութ, վորն իր մեջ  
պարունակում ե բույսի համար անհրաժեշտ բոլոր սննդանյութե-  
րը: Բայց գոմաղբն ամենից շատ իր մեջ պարունակում ե ազոտ,  
դրա համար ել այն միևնույն ժամանակ համարվում ե ազոտա-  
կան պարարտացում: Տնտեսության մեջ լավ գոմաղբ ստանալը  
պայմանավորված ե նրա պահելուց: Վատ պահելու դեպքում (բաց  
ողում) գոմաղբը կորցնում ե շատ սննդանյութեր և՛ հողի մեջ  
մացնելիս, բուսականության վրա ուժեղ ազդեցություն չի անում:  
Սոցիալիստական տնտեսություններում գոմաղբը պիտի պահել  
հատուկ գոմաղբապահեստներում. գոմաղբը հողին կարելի յե տալ

վաղ գարնանը (կամ աշնանը): Գոմաղբը հավասար կերպով շող  
են տալիս մարգագետնի յերեսը և հետո մարգագետնային ծանր,  
կամ ավելի լավ ե՛ սկսվառակավոր փոցխով փոցխում են: Յուրա-  
քանչյուր մարգագետին անհրաժեշտ ե ժամանակ առ ժամանակ  
գոմաղբով պարարտացնել: Առանձնապես դրա կարիքն ողում են  
բուսահողով աղքատ մարգագետինների հողերը: Մարգագետիննե-  
րում գոմաղբի ազդեցությունը տևում ե 3—4 տարի:

Յուրաքանչյուր անգամ պարարտացնելիս, առաջարկվում ե  
մտցնել 100—200 ցենտ. գոմաղբ (աղքատ հողերում շատ, հա-  
րուստ հողերում քիչ): Մարգագետինները բարելավելու դեպքում  
կարելի յե մտցնել մինչև 300 ցենտ.:

Գոմաղբահյութը—մարգագետնային հրաշալի տիպիկ պա-  
րարտացում ե: Գոմաղբահյութը զլխավորապես ստացվում ե  
գյուղատնտեսական անասունների մեղից և առավելապես ազո-  
տական ու կալիական պարարտանյութ ե: Գոմաղբահյութն ու-  
ժեղ պարարտանյութ ե և իր մեջ պարունակում ե բույսերի ար-  
մատներին մատչելի ձևով բոլոր սննդանյութերը: Մակայն վատ  
պահելու դեպքում (բաց ողում) նա կորցնում ե շատ սննդա-  
նյութեր: Դրանից խուսափելու համար գոմաղբահյութը պիտի  
պահել հատուկ գոմաղբահյութանոցներում, թարմ ողի ազդեցու-  
թյունից հեռու:

Գոմաղբահյութը մարգագետին են տեղափոխում հատուկ  
տակառներով: Տակառներից գոմաղբահյութը պիտի բաց թողնել  
ուղղակի մարգագետնի մակերևույթի վրա:

Ամենից լավ ե գոմաղբահյութը մտցնել հանդարտ, քամի  
չեղած և ամպամած յեղանակին: Գոմաղբահյութը մտցնելու ամե-  
նալավ ժամանակը—գարունն ե, մինչև մարգագետնային բուսա-  
կանության աճելն սկսվելը: Գոմաղբահյութն այնքան ուժեղ պա-  
րարտացում ե, վոր մաքուր ձևով այն նույնիսկ զնատակար ե:  
Դրա համար անհրաժեշտ ե նրան կիսով չափ կամ յերկու յեր-  
րորդով ջուր խառնել: Մեկ դույլ գոմաղբահյութին անհրաժեշտ ե  
խառնել մեկ, կամ ավելի լավ ե՛ յերկու դույլ ջուր: Յեթե այդ  
բանը չարվի, ապա բույսերը «կայրվեն», այսինքն՝ կդեղնեն ու  
կվոչնչանան: Մարգագետինները գոմաղբահյութով պարարտաց-  
նել կարելի յե նաև խոտհարքից հետո: Մարգագետնի մի հեկտա-  
րին ջրախառն գոմաղբահյութ պահանջվում ե 20—30 տոնն.

### ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՂԿՂԱՆՔԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՆԵԼԸ

Այն արտաներն ու խոտհարքները, վորոնք դարնան ու ամբանն ոգտագործվում են անասունների արածեցման համար, բացի վերը նշված խնամքի միջոցներից, պիտի հավասարեցնել նաև այնտեղ անասունների թողած կղկղանքը: Մարգագետնում յերկար մնացած կղկղանքը վրատ և ազդում խոտակազմի վրա, վորովհետև կղկղանքի տեղերը ծածկվում են կոպիտ, սակավ սննդարար (հաճախ նույնիսկ տավարի համար ֆլասակար) բուսականությամբ, կամ թե չե՞ ուժեղ զարգացող խոտերով, վորոնց, տավարն արածեցնելիս, չի ուտում: Սյուպիսով, արտաների տարածության մի նշանակալից մասն անոգտագործելի յե մնում:

Իրանից խուսափելու համար, անհրաժեշտ և անասունների կղկղանքն ամբողջ մարգագետնի վրա խնամքով շաղ տալ, ոգտագործելով այն վորպես բնական պարարտացում:

Իր ժամանակին այդ աշխատանքը կատարելու վրա պիտի ամենալուրջ ուշադրություն դարձնել: Այդ աշխատանքը պիտի կատարել ամառ արտամասում տավարի արածեցումը վերջանալուց առնվազն 1—2 որ հետո: Կղկղանքի հավասարաչափ բաշխումը յունաքանչյուր արածեցնելուց հետո կատարում են սովորական թեթև ճղիզգազ՝ փոցխի հետևի մասով, կամ ձեռքի փոցխերով ու թորխերով:

Հավասարեցնել կարելի յենաև յերկաթյա քրոակներով: Զիզգազաձև շուռ աված յերկաթյա ձողերից այդպիսի քրոակներ կարելի յե պատրաստել յուրաքանչյուր տնտեսության մեջ: Յեթե տավարն ինչ-ինչ պատճառներով յերկար և մնում միևնույն արտամասում, ապա այդ աշխատանքը պիտի կատարել, չսպասելով արածեցնելը վերջանալուն, այսինքն տավարը մի ուրիշ արտամաս տեղափոխվելուն:

### ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐՈՒՄ ԽՈՍԱՍԵՐՄԵՐ ՑԱՆԵԼԸ

Բնական մարգագետինների խոտակազմը լավացնելու համար անհրաժեշտ և յերբեմն յերբեմն այնտեղ կուլտուրական խոտասերմեր ցանել: Ճանելն առանձնապես անհրաժեշտ և այն ժամանակ, յերբ այս կամ այն պատճառով մարգագետնի բնական խոտակազմն սկսում և նոսրանալ, ճանելու համար կարելի յե կազմել 3 կամ 5 տեսակ խոտասերմերի խառնուրդ: Խառնուրդն ամենից լավ և կազմել այնպես, վոր թիթեռնածաղիկ բույսերի

քանակը խառնուրդի մեջ կազմի 60—70 տոկոս, իսկ հացազգիներինը՝ 30—40 տոկոս:

Յեթե մարգագետինը բարելավվում և զլխավորապես խոտհարքային ոգտագործման համար, ապա խառնուրդում պիտի գերակշռեն բարձր աճող, յերկար, լավ տերևակալվող ցողուն ունեցող բույսերը: Իսկ յեթե այն պիտի ոգտագործվի վորպես խոտ, ապա խառնուրդը կազմում են ցածր աճող արոտային բույսերից:

Մարգագետիններում ցանելու համար անհրաժեշտ սերմերը խորհտնտեսություններն ու կուլտնտեսությունները կարող են հավաքել խոտհարքների և արտաների վայրի արժեքավոր կերաբույսերից: Մեր մարգագետիններում շատ կան կերի տեսակներից արժեքավոր առաջնակարգ թե բարձր բերք տվող և թե անասունի համար շատ սննդարար բույսեր: Թիթեռնածաղիկներից դրանց թվին պատկանում են մեր վայրի յերեքնուկները, — կարմիր, սպիտակ և վարդագույն, առվույտը և կորնդանը: Մյուս տեսակ բույսերից առանձնապես լավ են մարգագետնային շյուղախոտը, վորտնախոտը, աղվեսազին, տիմոֆեեկկան և ուրիշները: Այսպիսով, մարգագետիններում արժեքավոր կերաբույսերի սերմերի սիստեմատիկաբար հավաքելը, մեր սոցիալիստական տնտեսությունները կապահովի մարգագետիններում խոտացանք կատարելու և նրանց բնական խոտակազմը բարելավելու: Մարգագետիններում կարելի յե ցանել վոշ միայն խոտը խոտասերմեր, այլև նրանց առանձին տեսակները: Այդ տեսակներից մեր խորհտնտեսություններն ու կուլտնտեսություններն որինակ պիտի վերցնեն կողմա շրջանի տնտեսություններից, վորոնք իրենց մարգագետիններում ցանում են կարմիր յերեքնուկ: Անգամ միայն այս բույսի ցանելը, մարգագետինների բերքն ավելացնում և 20—30 տոկոսով և միևնույն ժամանակ բարձրացնում և խոտի սննդարարության վորակը, — ավելացնելով սպիտակուցային նյութերը:

Խառն խոտասերմեր ցանելիս, մի հեկտ. պիտի ցանել 3—6 կլգ. յերեքնուկներ, մինչև 5 կլգ. առվույտ, մինչև 10 կլգ. կորնդան և 4—10 կլգ. զանազան հացազգիների սերմեր: Միայն մեկ տեսակ խոտասերմ ցանելու դեպքում, սերմի քանակը կարելի յե ավելացնել: Այսպես, յեթե ցանվում և միայն յերեքնուկ, ապա մարգագետնի մեկ հեկտ. կարելի յե ցանել 8—12 կլգ.:

Մարգագետիններում խոտասերմեր ցանելու գործը կանոնադրված կատարելու համար, կուլ-

8001  
 56055  
 1263



տնտեսականները պիտի խորհրդակցեն տեղական գյուղատնտեսի և մասնագետներին հետ, վորոնք և կը քաջատրեն ցանելու տեխնիկան:

Ավելի լավ է խոտացանը կտատարել դարնանը:

Սընանը կտրելի յի ցանել այն շրջաններում միայն, վորտեղ լինում է յերկարատև տաք աշուն, վոր խիստ ցուրտ, անկայն ձյունատատ ձմեռ: Առանձնապես վտանգավոր է թիթիռնաձողիկներին աշնանը ցանելը, վորոնք իրենց կյանքի սուղին շրջանում ձմեռվա սառնամանիքներից վախենում և հեղտությամբ ցրտահարվում են: Թոտերը պիտի ցանել տարվա այն յեղանակին, յերբ տվյալ վայրում անձրևներ են սպասվում, վորպէսզի հողի խոնավութունն սպահովի բույսերի հետագա նորմալ զարգացումը:

Յեթի ցանվելու յեն խոռը սերմեր, ապա ավելի լավ է ցանելուց առաջ սերմերը յերկու մասի բաժանել: Առաջին մասում կարելի յի խառնել ավելի ծանր սերմերը—յերեքնուկ, առվույտ, մարգագեանային յյուզախոտ և այլն, իսկ յերկրորդ մասում կմտնեն ավելի թեթև սերմեր—աղվեսագլի, վոսկեղած վաբակ և այլն: Հասարցանք ստանալու համար, թեթև և մազմուռտներով ծածկված ծանր սերմերն իրար հետ կարելի յի խառնել խոնավ ավազով, կամ մանր հողով: Յեթի խառնուրդի մեջ կորնզան և և մտնում, ապա այն պիտի առանձին ցանել, վորովհետև նրա խոշոր ու ծանր սերմերը, մյուս խոտերի մանր սերմերի հետ ցանելիս՝ հավասար ցանք չեն տա:

Ցանելուց առաջ անհրաժեշտ է մարգագետինը 2—3 հետք փոցիել, մարդագետնի մակերևույթը մի փոքր փխրեցնելու համար, հակառակ դեպքում, սերմերն ընկնելով մարգագետնի պինդ մակերևույթի վրա, կարող են չաճել և փտել:

Ամբողջ մարգագետնում հավասար ցանք, հետևապես նաև միանման խոտակազմ ստանալու համար, ավելի լավ է ցանվող սերմերի յուրաքանչյուր բաժինը կիսել և խաչաձև ցանել: Այս դեպքում հողամասն անցնելու ժամանակ առաջին անգամ թույլ տված սխալը կուղղվի յերկրորդ անգամ անցնելու ժամանակ:

Մարգագետիններում խոտացանը պիտի կատարել խաղաղ, քամի չեղած յեղանակին, ավելի լավ է՝ վաղ առավոտյան կամ յերեկոյան: Պիտի ցանել ձեռքով, շաղաքան:

Սերմերը մարգագետնի մակերևույթի վրա ամրացնելու համար, լավ է մարգագետնի մակերևույթը տափանել: Յեթի ցան-

վելու յի խոշոր սերմեր ունեցող այնպիսի խոտաբույսեր, ինչպես որինակ, կորնզան, խրոպուկ և այլն, ապա ցանելուց հետո անհրաժեշտ է թեթև փոցիել:

### ՁՈՐԵՐՆ ՈՒ ՁՈՐԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Ս. Հայաստանում գարնան արագ ձյունահալքը նպաստում է ջրի այնպիսի մեծ քանակությամբ կուտակման, վորը չկարողանալով ամբողջովին հողի մեջ ծծվել,—հոտում է լանջերից:

Լանջերից արագ թափով հոտող ջրերն ուժեղ կերպով լվանում են հողը և նպաստում նոր ձորակներ առաջանալուն, ինչպես նաև հների ավելի խորանալուն:

Ս. Հայաստանում ընդարձակ ու տափարակ հովիտների ու ձորակների բուսականությունը սովորաբար հնձվում է: Որինակ Արագածի, Աղմաղանի և այլն, մեծ ու ընդարձակ ձորակները—կիրճերը, նեղ և դիք թիքումներով ձորակներն ոգտագործվում են վորպէս արոտ:

Մակայն, ինչպես մեծ ու ընդարձակ, նույնպես և նեղ ձորակների խոտերը, կերի տեսակետից, սահավարժեք են:

Ամեն տարի նոր ձորակների առաջանալը կրճատում է խոտահարքների և արոտների ոգտակար տարածությունը: Շարունակաբար նոր ձորակներ առաջանալը, նրանց դիք լանջերը շատ դեպքերում խոչնդոտ են հանդիսանում նրանց բուսածածկն ոգտագործելու, ինչպես նաև անասունների և մարդագետնաարոտների մասսիֆների բնակչության տեղափոխության համար:

Գարնանն այդ ձորակները ջրով լցվելով, դաշտավայրի հողերին մեծ ֆլուաններ են պատճառում: Իրա համար պայքարը ձորակների, դար ու փոսերի դեմ անհրաժեշտ է:

Ձորակների ու գար ու փոսերի առաջանալն ու շատանալը կարելի յի կանխել հետևյալ միջոցներով.

1. Ձորակներում ջրեր թափվելու տեղերն անհրաժեշտ է փաշիններով ամրացնել, կամ լվացումը կանխելու նպատակով, ջրվեժի հատակը խոշոր քարեր լցնել: Ձաշիններ շինելը բարդ գործ չէ. խոփներից մինչև 0,25 մետր հաստության և 1—2 մետր յերկարության խուրճեր են շինում: Ձորակները լցնելու և ամրացնելու համար կարելի յի ոգտագործել նաև մարգագետիններից ու արոտներից հավաքած քարերը:

2. Յեթի ձորակները գտնվում են լեռնային դենայում, ապա

ձորակներէից վերև կարելի չի պաշտպանողական գոտի ստեղծել՝ անասառ կամ թփուտներ տնկելու միջոցով: Ավելի բարձր լեռներէ ձորակները կարելի չի ամրացնել բազմամյա խոտեր ցանկով:

Յ. Ձորակների դեմ պայքարելու գլխավոր միջոցը—գիջ լանջերում անասունների արածեցումը կանոնավորելն և Պիտի նկատի ունենալ, վոր արոտների վերաբերմամբ առանց վորևե նախազգուշական միջոցներ, առանց վորևե խնամք կիրառելու, նրանցում անասունների չափազանց արածեցումը, տարեց-տարի ավելի ու ավելի յի վատացնում արոտներէ դրությունը: Արոտներն ուժեղ կերպով հյուժվում են, բուսականությունը նոսրանում և հողը մերկանում և:

Այդպիսի լանջերում քաշալ ու մերկացած տեղերն աստիճանաբար մեծանում են և անձրևներից ու գարնան ձյունահալքի ջրերից հողը վաչգվում և: Հողի այդպիսի նոր վացումներն ել հանգիստանում են փոսեր ու ձորակներ կազմակերպվելու սկիզբ: Դրանց շնորհիվ ել խոտհարքներն ու արոտները, վորպես անասնակերերի բազա, ամբողջովին կորցնում են իրենց տնտեսական նշանակությունը:

Այդ բանը կանխելու համար, գիջ լանջերում, խոնավ յեղանակներին անասուն չափտի արածեցնել: Ըստ հնարավորին, պիտի թեթևացնել այդպիսի լանջերի բեռնվածությունը: Անասունների արածեցումը միանգամայն պիտի դադարեցնել այնպիսի արոտամասերում, վորտեղ արդեն կան կենդանիների վոտնակոթ արած ձանապարհներ, վորոնք մերկացել են բուսականությունից ու ճիւղից:

Այդպիսի արոտամասերին պիտի մի քանի տարի հանդիստ տալ, վորպեսզի բուսականությունից մերկացած հողը նորից բույսով ծածկվի: Մերկացած լանջերի բուսականության արմատազրկելու պրոցեսն ուժեղացնելու համար, անհրաժեշտ և ձեռք առնել համապատասխան միջոցներ—խառը խոտասերմեր ցանել և այլն:

Բնական խոտհարքների ու արոտների խնամքի անհրաժեշտ միջոցները արանք են: Սոցիալիստական սեկտորի անասնաբուժական բոլոր թնտեսություններում նրանց կիրառումն անհրաժեշտ և, վորովհետև խնամք տանելով կարելի չի յերկար ժամանակ պահպանել բնական մարգագետինների բարձր արդյունավե-

տությունը: Պիտի հիշել, վոր սոցիալիստական տնտեսությունների առաջ խնդիր և դրված. «անասնաբուժության բնագավառում, յերկրորդ հնգամյակում այնպես մեծացնել անասունների քանակը և ապրանքային արտադրանքի աճումը, վորը հիմնականում, համապատասխանի ԽՍՀՄ անասնաբուժական պրոբլեմի լուծմանը, ինչպես կուսակցությունը դրան հասավ առաջին հջնգամյակում հացի պրոբլեմի նկատմամբ»:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	69
Արտոնների և խոտհարքների խնամքը . . . . .	3
Մարգագետիններում թմբերի, կոճղերի վնչնչացնելը . . . . .	7
Մոլախոտերի և թունավոր բուսականության վնչնչացնելը . . . . .	8
Մարգագետինները ջարերից մաքրելը . . . . .	10
Մարգագետնի փոցխելը . . . . .	11
Մարգագետինների ցաքանելը . . . . .	12
Մարգագետնի պարարտացնելը . . . . .	13
Անասունների կղկղանքի հավասարեցնելը . . . . .	16
Մարգագետիններում խոտասերմեր ցանելը . . . . .	16
Զորերն ու ձորակները և պայքարը նրանց դեմ . . . . .	19

---

« Ազգային գրադարան



NL0291341

152.95

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.



А. К. Магакян

Уход за сенокосами и пастбищами